

Չպէտք է վախենալ կեանքի բաղմազանութիւնից: Երբ վերանան կեանքի ազատ զարգացման արգելք եղող հնացած կոտորներն ու հասկացողութիւնները—շատ մեռելներ յարութիւն առնեն, շատ համբներ կը սկսեն խօսել: Եւ միթէ անապատը լաւ է բուրաստանից, գերեզմանային լուծութիւնը կեանքի ժխտելից... Տգիտութեան և ֆանատիզմի շերտերի տակ մեր ասպետ լեւնական հայրենակիցները ունին թաղցրած, նիրհող, սաղմային դրութեան մէջ հոգու և մտքի սքանչելի յատկութիւններ, որոնց երևան հանելը և զարգացումը առանձին փայլ կը տայ ոչ միայն պետութեան, այլ և համայն մարդկութեան: Միայն պէտք է փշրել դարերի ընթացքում դրանց հասկացողութիւնների վրայ նստած կեղեք, տարրալուծել այն կրօնական շաղախը, որ կպցրել է նրանց թուրք-թաթարական տարրի հետ և անշարժութեան մատնել այլ ծագում ունեցող այդ ցեղերը: Միայն պէտք է վերացնել այն կարգերը, որոնք անարդար լինելով աստիւծութիւն և վրիժառութիւն են սնուցանում լեռների այդ խրոխտ զաւակների մէջ և մեկուսացնում, կղզիացնում նրանց՝ մեր կուլտուրական կեանքից:

Եւ այն նոր կեանքը, որ յայտարարում է ազատ զարգացման երաշխաւորութիւն բոլորի համար, առանց կրօնի, ազգի և սեռի խտրութեան, վերածնութեան սկիզբ կը դնի մեր բազմատանջ երկրի համար: Ուրեմն, մի կողմ թողնենք տերրիտորիալ և կրօնական անջրպետները, որոնք արուեստական խոչընդոտներ են դնում օրէցօր բարդուող կեանքում և իրանց մէջ պարունակում են կազ ու կռուի սերմեր ապագայում...

Լ. Ս.

Մայիսի 1-ին.

Հայկական հանրագիրը

1) Հրաւիրել համառուական ներկայացուցչական ժողով ընդհանուր, հաւասար, ուղղակի և զաղտնի ձայնատուութեան սկզբունքներով, տալով հայ ժողովրդին իրաւունք մասնակցելու այդ ժողովին Ռուսաստանի ներքին նահանգների հետ համահաւասար հիմունքներով:

2) Մտցնել Անդրկովկասում տեղական անդասակարգ ինքնավարութիւն լայն հիմունքներով, հիմնելով ա.) ինքնավար մանր զիմաստային միութիւն, բ.) դաւառական (առանց նահանգականի) զիմաստօ, առանձնացնելով բաղաբային ինքնավարութիւնը իբրեւ առանձին միութիւններ և գ.) մէկ Համա-

անդրկովկասեան զեմստովային ժողով, որը իրաւունք պիտի ունենայ օրէնքներ առաջարկելու և նախօրօք քննելու Անդրկովկասին վերաբերեալ բոլոր օրէնսդրութիւնները:

3) Մտցնել երդուեալների դատարան ընդհանուր դատաստութեան (общей подсудности) բոլոր գործերի համար, նոյն թւում նաև քաղաքական, կրօնական, պաշտօնավարական և մամուլի գործերի համար. մտցնել նոյնպէս ընտրեալ հաշտարար դատաւորների հաստատութիւնը: Թոյլ տալ դատավարութիւնը՝ հաշտարար դատաստանական հիմնարկութիւններէ մէջ, տեղական լեզուներով: Պարտադիր անել, որ հայաշատ տեղերում դատաւորները և դատաստանական քննիչները գիտենան հայերէն լեզուն:

4) Ոչնչացնել դասակարգային առանձնաշնորհներ: Հասարակեցնել կանանց և տղամարդկանց իրաւունքները:

5) Ազատութիւն խօսքի, ժողովների, համախմբումների, համագործադուլների (стачка) և ընկերակցութիւնների: Կարգադրել, որմարդասիրական, քաղաքակրթական, հրատարակչական և ուրիշ կրթական հաստատութիւնները, որպէս և պարբերական հրատարակութիւնները հիմնուեն և բացուեն յայտարարական (явочный) ճանապարհով: Ազատել տեղական լեզուներով հրատարակուող ամեն տեսակ աշխատութիւնները գրաքննութիւնից և պատասխանատու անել մամուլը բացառապէս դատաստանի առաջ:

6) Լեզուի ազատութիւն ժողովներում: Գործավարութիւն գիւղական հաստատութիւնների մէջ, նաև գիւղական հասարակութիւնների փոխադարձ յարաբերութիւնների մէջ տեղական լեզուով:

7) Անձնաւորութեան և ընակարանի անձեռնմխելիութիւն: Ոչնչացնել անցաթղթերի սխտեմը կայսրութեան սահմանների մէջ: Վերացնել վարչական պատիժներն ու տուգանքները և ոչնչացնել ուժեղացրած հսկողութիւնը: Վերացնել 1898 թ. հրատարակուած ոստիկանական զեմստովային պահապանների օրէնքը, հիմնել նոր զեմստովային ոստիկանութիւն և ենթարկել այս ոստիկանութիւնը զեմստովօներին, իսկ քաղաքային ոստիկանութիւնը՝ քաղաքներին:

8) Ընդհանուր, պարտադիր, ձրի, տարրական ուսում: Լիակատար ազատութիւն տալ մասնաւոր նախանձեռնութեանը՝ բանալու յայտարարական ճանապարհով ամեն տեսակի և ամեն կարգի ուսումնարաններ և դպրոցական հաստատութիւններ: Մասնակից անել հասարակական ոյժերը պետական միջնակարգ և ստորին դպրոցների կառավարութեան գործին: Բա-

նալ համալսարան Թիֆլիսում երկու սեռի անձանց համար կովկասագիտութեան և տեղական լեզուների ամբիոններով՝ նաև բանալ բարձրագոյն մասնագիտական դպրոցներ Անդրկովկասում:

9) Պարտադիր անել, որ տարրական դպրոցներում դասաւանդութիւնը հայ ծագում ունեցող մանուկների համար լինի հայերէն, աւանդելով և ուսերէնը, որպէս գլխաւոր առարկաներից մէկը: Լուրջ հիմունքների վրայ դնել հայոց կրօնի, հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան ուսուցումը պետական դպրոցներում, ուրիշ գլխաւոր առարկաների հետ հասարակ դրուէններով:

10) Ողջի ազատութիւն: Վերացնել բոլոր դասնական և կրօնական սահմանափակումները: Ազատութիւն տալ երգութիւն մայրենի լեզուով բոլոր պետական և հասարակական հաստատութիւնների մէջ:

11) Վերականգնել ինքնավար հայկական եկեղեցու իրաւունքները, վերացնելով բոլոր սահմանափակումներն ու խոչընդոտները, մանաւանդ ա) հայոց եկեղեցու կալուածքները, կուլտուրական-կրթական և բարեգործական հաստատութիւնները կառավարելու գործում, բ) ս. Էջմիածնի սինոդի անդամների, թեմական առաջնորդների, յաջորդների և ուրիշ հոգեւոր վարչական պաշտօնեաների համայնական ընտրութեան գործերում, և գ.) թէ ուսահայկական թեմերի և թէ ամենայն հայոց հոգեւոր-ազգային ժողովները պարբերաբար գումարելու գործում:

12) Վերադարձնել Հայկական եկեղեցուն նրա ծխական դպրոցները և կալուածքները, վերացնելով 1884-ից մինչև 1903 թ. թ. բոլոր օրէնքներն ու կարգադրութիւնները, որոնք վերաբերում են թէ ծխական դպրոցներին և թէ այդ դպրոցների և հայոց վանքերի, եկեղեցիների և հոգեւոր դպրոցների կալուածքներին:

13) Հիմնել Կովկասում հայ-կաթոլիկական թեմ թեմական առաջնորդով, հայազգի և հայ-կաթոլիկ ընտրուած եպիսկոպոսով:

14) Մտցնել պրոգրեսիւ եկամտային հարկատուութիւն, ոչնչացնելով առաջնակարգ անհրաժեշտ իրերից առնուող անուղղակի հարկերը:

15) Բարուոքել բանուորական աշխատանքի պայմանները, կանոնաւորելով օրէնսդրական ճանապարհով բանուորական օրաժամը, վերացնելով բանուորական միութիւնների ու ընկե-

րակցութիւնների կաղմակերպութեանը խանգարող սահմանափակումները:

16) Պարտադիր անել, որ միւլքադարական և ժամանակաւորապէս-պարտաւորուած (временно—обязанные) գիւղացիների հողաբաժինները (надел) յետ գնուեն ամբողջ համայնքների կողմից դանձարանի աջակցութեամբ, Ռուսաստանի ներքին նահանգների հետ համահաւասար հիմունքներով: Աջակցել որ գիւղական հասարակութիւնները կարողանան յետ գնել իրանց հողաբաժիններից դուրս գոնուող այն մասնաւոր կալուածատիրական հողերը, որոնցից նրանք շարունակ օգտուում են, և պարտաւորացնել, որ գիւղացիական բանկը տայ նրանց այդ նպատակի համար փոխառութիւններ:

Թոյլ տալ մասնաւոր վարկային (կրեդիտային) հաստատութիւններին գործողութիւններ անել գիւղացիական հողերի յետգնման վերաբերեալ:

17) Նախադաս (преимущественное) իրաւունք տալ տեղական սակաւահող և անհող գիւղացիներին ընկալուելու ազատ արքունի հողերի վրայ Անդրկովկասի սահմաններում: Դիւրութիւններ տալ գիւղական ազգաբնակչութեանը օգտուելու անտառներից, դաշտակներից (թալաններից) և արօտատեղիներից:

19) Վերացնել ուսաց հպատակութիւնը ընդունած թիւքահայ գաղթականներին վերաբերեալ սահմանափակիչ և բացառիկ օրէնսդրութիւններն ու կառավարչական կարգադրութիւնները և տալ նրանց ուրիշ հպատակների հետ հաւասար իրաւունք հողաբաժիններ ստանալու Անդրկովկասի սահմաններում:

20) Հայ զինուորներն ծառայելը խաղաղ ժամանակ Կովկասի սահմաններում:

21) Վերադարձնել վարչական իշխանութեամբ աքսորուած հայերին, ներում շնորհել քաղաքական և կրօնական գործերի համար տուժող բոլոր անձերին:

—Մայիսի 5-ին հանդիսաւոր մուտք գործեց Թիֆլիս Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ գեներալ ադիւտանտ կոմս Վորոնցով-Դաշկով և ստանձնեց երկրիս կառավարութիւնը:

—Ներքին գործերի մինիստրութիւնը հաղորդել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին որ «Թագաւոր Կայսրը, համաձայն 1904 թուի դեկտեմբերի 12-ին Բարձրագոյն ուկազում եղած Նորին Մեծութեան նախացուցումների և մինիստրի ամենաընդատակ զեկուցագրի, արուած 1905 թուի ապրիլի 2-ին, Բար-

ձրագոյն բարենաճեց ոչնչացնել 1891 թուի մարտի 16-ի Բարձրագոյն հաստատուած կանոնները, որոնք վերաբերում էին հայ-լուսաւորչական հոգևորականութիւնը վարչական կարգով պատիժների ենթարկելուն:

—Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը խնդիր է ներկայացրել ներքին գործերի մինիստրութեան, որ վերացուի հանգուցեալ Պէվէի օրով դրուած այն արգելքը, որ գոյութիւն ունի վերջին տարիներս Թիւրքիայից եպիսկոպոսանալու համար էջմիածին եկող վարդապետները վրայ:

—Մայիսի 1-ին Կառ. Սենատին Բարձրագոյն տրուած ուկագով արեւմտեան Ռուսաստանի 9 նահանգներում վերացըրուած են լեհական ազգաբնակութեան նկատմամբ գործադրուող մի քանի սահմանափակումները: Լեհական ծագում ունեցող անձանց թոյլ է տրոււմ այսուհետեւ կապալով վերցնել հողեր և բոլոր օրինական միջոցներով հողային սեփականութիւններ ձեռք բերել: Թոյլատրոււմ է կազմել ազնուականների ժողով, ընտրել ազնուականների պարագլուխներ: Այդ նահանգների սկզբնական, երկրասեան, քաղաքային և միջնակարգ ուսումնարաններում թոյլատրոււմ է դասաւանդել լիտովեան և լեհական լեզուները: